

**ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**  
**ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ**  
**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

**2012 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 3-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ԶՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ԶՐԱՆԵՌԱՅՄԱՆ ՍԵԿՏՈՐԻ ԾՐԱԳՐԻ ԼՐԱՅՈՒՑԻՉ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ» ՎԱՐԿԱՅԻՆ ՆԱՄԱՉԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԲՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

15 հունիսի 2012թ.

Նայասրանի Նանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Նարոյթյունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թովուզյանի, Ա. Խաչարյանի (զեկուցող), Վ. Նովհաննիսյանի, Ն. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ Նայասրանի Նանրապետության փարաձքային կառավարման նախարարության ջրային փնտրության պետական կոմիտեի նախագահ Ա. Անդրեասյանի,

համաձայն Նայասրանի Նանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Նայասրանի Նանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց դատական նիստում բանավոր ընթացակարգով քննեց «2012 թվականի մայիսի 3-ին ստորագրված՝ Նայասրանի Նանրապետության եւ Ասիական զարգացման բանկի միջեւ «Զրամատակարարման եւ ջրահեռացման սեկտորի ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավո-

րությունների՝ Նայասրանի Նանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Նանրապետության Նախագահի՝ սահմանադրական դատարան 2012 թվականի հունիսի 11-ին մուրքագրված դիմումը:

Լսելով սույն գործով զեկուցողի հաղորդումը, Նանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի բացատրությունը, հեղափոխելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Նայասրանի Նանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Յ**.

1. «Ջրամաքակարարման եւ ջրահեռացման սեկտորի ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) լրացուցիչ ֆինանսավորում» վարկային համաձայնագիրն (այսուհետ՝ Նամաձայնագիր) ստորագրվել է 2012 թվականի մայիսի 3-ին՝ Նայասրանի Նանրապետության (այսուհետ՝ Վարկառու) եւ Ասիական զարգացման բանկի (այսուհետ՝ Բանկ) միջեւ:

2. Նամաձայնագրի նպատակն է ապահովել ջրամաքակարարման եւ ջրահեռացման համակարգի բարելավմանն ուղղված միջոցառումների շարունակականությունը, հասանելի, հուսալի ու կայուն ծառայությունների մատուցումը, որոնք կկառավարվեն առեւտրային սկզբունքներով ու բնապահպանական տեսանկյունից հուսալի գործելակերպով (Առդիր 1, կեր 1), վերականգնել, փոխարինել եւ ընդլայնել Ծրագրի շրջանակներում ընդգրկված 18 քաղաքներում եւ 92 գյուղական համայնքներում ջրամաքակարարման բաշխիչ ցանցերը (Առդիր 1, կեր 2):

Ծրագիրը կազմված է երեք մասերից՝ ա) ջրամաքակարարման բաշխիչ ցանցերի վերականգնում, փոխարինում եւ (կամ) ընդլայնում, բ) աջակցություն վերը նկարագրված աշխատանքների մասով Ծրագրի նախագծման, իրականացման եւ վերահսկման ու Ծրագրի տեխնիկական եւ ֆինանսական աուդիտի իրականացման համար եւ գ) Նայջրմուղկոյուղի ընկերության եւ վերջինիս սպասարկման տարածքում չընդգրկված գյուղերում ջրամաքակարարման եւ ջրահեռացման ծառայություններ մատակարարողների կարողությունների զարգացում:

Ծրագիրն իրականացվում է ՆՏ փարաձքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի եւ Նայջրմուղկոյուղի ընկերության կողմից, որի նպատակով Նայջրմուղկոյուղի ընկերությանը կտրամադրվի սույն Նամաձայնագրում նշված վարկային միջոցները՝ Բանկի պահանջները բավարարող պայմաններին համապատասխան:

Ծրագիրն ավարտվելու է 2017 թվականի ապրիլի 30-ին (Առդիր 1, կեր 3):

3. Նամաձայնագիրը բաղկացած է 8 հոդվածներից, որոնք վերաբերում են վարկին առնչվող կանոնակարգերին ու սահմանումներին (հոդված I), վարկի չափին ու մարմանը (հոդված II), վարկի միջոցների օգտագործմանը (հոդված III), Ծրագրի իրականացման հատուկ պարտադիր պայմաններին (հոդված IV), վարկի կասեցմանը, չեղյալ համարմանը կամ մարման ժամկետի արագացմանը (հոդված V), Նամաձայնագրի ուժի մեջ մտնելուն (հոդված VI), իրավասությունների պարփակմանը (հոդված VII) եւ այլ դրույթներին (հոդված VIII):

4. Նամաձայնագրի II հոդվածի 2.01 բաժնի համաձայն՝ Բանկի կողմից Վարկառուին փրամադրվող վարկի չափը կազմելու է 25.886.000 ՓՆԻ (փոխառության հատուկ իրավունք), իսկ փրամադրման ժամկետը՝ 32 փարի (մինչև 2044թ. փետրվարի 1-ը): Վարկի փակման ամսաթիվը 2017 թվականի հոկտեմբերի 31-ն է կամ որեւէ այլ ամսաթիվ, որը ժամանակ առ ժամանակ կհամաձայնեցվի Բանկի ու Վարկառուի միջև (III հոդված, 3.06 բաժին): Վարկի հիմնական գումարի եւ փոկոսագումարի վճարման արժույթը ԱՄՆ դոլարն է:

5. Նամաձայնագիրն ունի 5 առդիրներ, որոնցում ներկայացված են՝ Ծրագրի նկարագրությունը (Առդիր 1), Վարկի մարման ժամանակացույցը (Առդիր 2), Վարկի միջոցների հարկացումը եւ մասհանումը (Առդիր 3), Ապրանքների, աշխատանքների եւ խորհրդարկական ծառայությունների ձեռքբերումը (Առդիր 4), Ծրագրի կատարումը եւ ֆինանսական հարցերը (Առդիր 5):

6. Նամաձայնագրով Նայասրանի Նանրապետությունն սրանձնում է, մասնավորապես, հետեւյալ պարտավորությունները.

- Նամաձայնագրի II հոդվածի 2.02 բաժնի համաձայն՝ վարկային հաշվից հանված գումարի եւ հետագա մնացորդի համար յուրաքանչյուր փարվա փետրվարի 1-ին եւ օգոստոսի 1-ին Բանկին վճարել արտոնյալ ժամանակահատվածի (2012 - 2020թթ.) ընթացքում փարեկան 1% փոկոսավճար, իսկ ոչ արտոնյալ ժամանակահատվածի (2020 – 2044թթ.) ընթացքում՝ 1,5% փոկոսավճար,

- սկսած 2020 թվականի օգոստոսի 1-ից մինչև 2044 թվականի փետրվարի 1-ը, կիսամյակային մուծումներով՝ Վարկի մայր գումարը, փոկոսավճարները եւ վարկի հետ կապված վճարները ենթակա են կատարման յուրաքանչյուր փարվա փետրվարի 1-ին եւ օգոստոսի 1-ին՝ ըստ 2-րդ առդիրում ամրագրված մարման ժամանակացույցի (II հոդված, 2.03 եւ 2.04 բաժիններ),

- վերավարկավորել Վարկի միջոցները Նայջրմուդկոյուդի ընկերությանը՝ Ենթավարկային համաձայնագրի (համաձայնագրերի) ներքո՝ Բանկի համար ընդունելի պայմանների համաձայն (հոդված III, բաժին 3.01, կետ «ա»),
- ապահովել, որպեսզի Նայջրմուդկոյուդի ընկերությունն ուղղի Վարկի միջոցները Ծրագրից բխող ծախսերի ֆինանսավորման համար՝ Վարկային համաձայնագրի եւ Ծրագրի համաձայնագրի դրույթների համաձայն (հոդված III, բաժին 3.01, կետ «բ»),
- եթե Բանկն այլ համաձայնություն չի փայխ, ապա կապարել կամ ապահովել, որպեսզի Վարկի միջոցներից ֆինանսավորվող ծախսային հոդվածների մասով գնումները կապարվեն Վարկային համաձայնագրի 4-րդ առդիրի կիրառելի դրույթներին համապատասխան (հոդված III, բաժին 3.03),
- եթե Բանկն այլ համաձայնություն չի փվել, ապա ապահովել, որպեսզի Վարկի միջոցներից ֆինանսավորվող բոլոր ծախսային հոդվածները կապարվեն բացառապես Ծրագրի իրականացման նպատակով, իսկ գնումները կապարվեն Նամաձայնագրի 4-րդ առդիրի կիրառելի դրույթներին համապատասխան (III հոդված, 3.03 եւ 3.04 բաժիններ),
- Ծրագրի իրականացման եւ Ծրագրի օբյեկտների շահագործման ընթացքում կապարել կամ ապահովել, որպեսզի կապարվեն Նամաձայնագրի 5-րդ առդիրում ամրագրված բոլոր պարտավորությունները (հոդված IV, բաժին 4.01),
- հնարավորություն ընձեռել Բանկի ներկայացուցիչներին ստուգելու Ծրագիրը, Ապրանքներն ու Աշխատանքները, ինչպես նաեւ ցանկացած համապատասխան գրանցում ու փաստաթուղթ (հոդված IV, բաժին 4.02),
- ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ, որպեսզի Նայջրմուդկոյուդի ընկերությունը հնարավորություն ունենա կապարելու իր պարտավորությունները Ծրագրի համաձայնագրի ներքո՝ ներառյալ սակագների սահմանումը եւ կիրառումը, ինչպես նշված է Նամաձայնագրի 5-րդ առդիրի 4-րդ պարբերության մեջ, ինչպես նաեւ չձեռնարկել կամ չթույլատրել ձեռնարկել որեւէ գործողություն, որը կմիջամարի այդպիսի պարտավորությունների կապարմանը (հոդված IV, բաժին 4.04),
- նշանակել Նայջրմուդկոյուդի ընկերությանը որպես Նայասարանի Նանրապետության գործակալ՝ Նամաձայնագրի 3.02, 3.03 եւ 3.05 բաժիններով եւ Վարկին առնչվող կանոնակարգերի 5.01, 5.02 եւ 5.03 բաժիններով պահանջվող կամ թույլատրվող գործողությունների ձեռնարկման եւ ցանկացած պայմանագիր կնքելու նպատակով (հոդված VII, բաժին 7.01),

- Նամաձայնագրի շրջանակներում ֆինանսավորման ենթակա բոլոր ապրանքները, աշխատանքներն ու խորհրդարկական ծառայությունները ձեռք բերել Բանկի այն անդամ պետությունների կողմից, որոնք նշանակվել են Բանկի կողմից՝ որպես գնման թույլատրելի աղբյուրներ, եւ որոնք բավարարում են Բանկի կողմից սահմանված համապատասխանելիության չափորոշիչներին (III հոդված, 3.05 բաժին),

- Բանկին հնարավորություն է ընձեռում պարբերաբար քննարկելու Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները եւ Ծրագրին վերաբերող ֆինանսական հարցերը իր կողմից նշանակված աուդիտորների հետ միասին (IV հոդված, 4.03 բաժին, «բ» կետ),

- ապրանքները, աշխատանքները եւ խորհրդարկական ծառայությունները ձեռք բերել համապատասխանաբար Գնումների ուղեցույցների համաձայն եւ կարգավորել Խորհրդարկական ուղեցույցներով (Առդիր 4, կետ 1),

- եթե Բանկն այլ համաձայնություն չի փալիս, ապրանքները եւ աշխատանքները ձեռք բերել բացառապես Միջազգային մրցակցային սակարկությունների, Ազգային մրցակցային սակարկությունների եւ Շուփինգ գնումների մեթոդների հիման վրա (Առդիր 4, կետ 3),

- Բանկի հետ ապահովել, որպեսզի մինչեւ ազգային մրցակցային սակարկությունները գնման որեւէ գործընթաց սկսելը Նայաստանի Նանրապետության մրցակցային ընթացակարգերը համապատասխանեն Գնումների ուղեցույցներին (Առդիր 4, կետ 5),

- չկնքել աշխատանքների հետ կապված որեւէ պայմանագիր Ենթաձրագրի համար, որը ենթադրում է բնապահպանական ազդեցություն՝ քանի դեռ Նայաստանի Նանրապետության բնապահպանության նախարարությունը չի փրամադրել Ծրագրի բնապահպանական նախնական ուսումնասիրության (ԲՆՈՒ) վերջնական հաստատումը, եւ Նայաստանի Նանրապետությունն Աշխատանքների հետ կապված պայմանագրում չի ներառել Ծրագրի բնապահպանական կառավարման պլանի (ԲԿՊ) համապատասխան դրույթները (Առդիր 4, կետ 6),

- բացառությամբ այն դեպքերի, երբ Բանկն այլ համաձայնություն է փալիս, եւ բացառությամբ այն դեպքերի, որոնք ամրագրված են Նամաձայնագրի 4-րդ առդիրի 9-րդ կետում, Խորհրդարկական ծառայություններ ընտրելիս եւ ներգրավելիս կարարել որակի եւ գնի վրա հիմնված ընտրություն (Առդիր 4, կետ 8),

- ապահովել, որպեսզի ձեռք բերվող բոլոր ապրանքներն ու աշխատանքները (ներառյալ՝ առանց սահմանափակումների, ողջ համակարգչային

տելինիկան, ծրագրերը եւ համակարգերը՝ անկախ այն հանգամանքից, առանձին են ձեռք բերված, թե ներգրավված են ձեռք բերվող այլ ապրանքների եւ ծառայությունների մեջ) չտրանսհարեն եւ չխախտեն արդյունաբերական կամ մրավոր սեփականության որեւէ իրավունք կամ էլ երրորդ կողմի պահանջի առարկա հանդիսանան (Առդիր 4, կեր 10, ենթակերպ «ա»),

- ապահովել, որպեսզի Ծրագիրն իրականացվի Ծրագրի կառավարման ձեռնարկում (ԾԿՁ) ամրագրված մանրամասն միջոցառումների համաձայն, ինչպես նաեւ ապահովել, որպեսզի Ծրագրի համար անհրաժեշտ համաֆինանսավորումը հարկացվի եւ դուրս գրվի ժամանակին՝ Ծրագրի ներքո աշխատանքները ժամանակին ավարտելու նպատակով, եւ լրացուցիչ համաֆինանսավորումը ժամանակին փրամադրվի միջոցների անբավարարության կամ գերաժախսի դեպքում (Առդիր 5, կերեր 1 եւ 2),

- ապահովել, որպեսզի Նայջրմուդկոյուդի ընկերությունը եւ ծառայություն մատուցող մյուս կազմակերպություններն ունենան համարժեք հարկադիր մեխանիզմներ եւ իրավասություններ՝ արդյունավետ կերպով հավաքագրելու ջրամատակարարման ու ջրահեռացման ծառայության դիմաց վճարներ եւ վճարում չկատարողներին փուզանելու նպատակով՝ հավաքագրման արդյունավետությունը բարելավելու, վճարումից խուսափելը սահմանափակելու եւ ջրամատակարարման ու ջրահեռացման աշխատանքների անխափանությունը երաշխավորելու նպատակով (Առդիր 5, կեր 3),

- հանել Սկզբնական վարկային համաձայնագրի 5-րդ առդիրի 7-րդ կերը եւ ամբողջությամբ փոխարինել Նամաձայնագրի 5-րդ առդիրի 4-րդ կերում սահմանված դրույթով (Առդիր 5, կեր 4),

- երաշխավորել եւ ապահովել, որպեսզի Նայջրմուդկոյուդի ընկերությունը երաշխավորի, որ բոլոր Ենթածրագրերն ընտրվեն Նամաձայնագրի 5-րդ առդիրի 5-րդ կերի «ա»-«է» ենթակերպերում սահմանված ընտրության չափորոշիչներին համապատասխան (Առդիր 5, կեր 5),

- երաշխավորել եւ ապահովել, որպեսզի Նայջրմուդկոյուդի ընկերությունը երաշխավորի, որ յուրաքանչյուր Ծրագրի եւ Ծրագրի բոլոր օբյեկտների նախապատրաստումը, նախագծումը, շինարարությունը, իրականացումը, գործողությունը եւ ավարտը համապատասխանեն Նայաստանի Նանրապետության՝ շրջակա միջավայրին, առողջապահությանը եւ անվտանգությանը վերաբերող բոլոր կիրառելի օրենքներին եւ կանոնակարգերին, Բնապահպանական երաշխիքներին, Ծրագրի

բնապահպանական նախնական ուսումնասիրությունում (ԲՆՈԲ) եւ Ծրագրի բնապահպանական կառավարման պլանում (ԲԿՊ) սահմանված պահանջներին, ինչպես նաեւ Երաշխիքների մասով մոնիթորինգի հաշվետվությամբ ամրագրված ուղղիչ կամ կանխարգելիչ գործողություններին (Առդիր 5, կետ 6),

- երաշխավորել եւ ապահովել, որպեսզի Նայջրմուդկոյուդի ընկերությունը երաշխավորի, որ որեւէ փեսակի աշխատանքների իրականացում չհանգեցնի հողի մշտական ձեռքբերման, փոխանցման, վաճառքի, իրավիճակի վարթարացման, օգտագործման սահմանափակման կամ մուտքի դեպի մասնավոր սեփականություն, որոնց դեպքում կկիրառվի Բանկի՝ հարկադիր վերաբնակեցման մասով երաշխիքները, եւ որ Ծրագրի բոլոր օբյեկտները լինեն եւ Ծրագրի ներքո աշխատանքները կատարվեն գոյություն ունեցող օրարման գոտիների սահմաններում, եւ Ենթածրագրի շրջանակներում հողի ձեռքբերման կամ վերաբնակեցման գործողությունների չնախատեսված անհրաժեշտություն առաջանալու դեպքում հողի ձեռքբերումը եւ (կամ) վերաբնակեցումն իրականացվի հողի ձեռքբերման եւ հարկադիր վերաբնակեցման վերաբերյալ Նայասրանի Նանրապետության՝ կիրառելի օրենքներին եւ կանոնակարգերին համապատասխան, Նարկադիր վերաբնակեցման մասով երաշխիքներին, Սկզբնական ծրագրի Վերաբնակեցման շրջանակային փաստաթղթի (ՎՇ), ինչպես նաեւ Ծրագրի վերաբնակեցման պլանում (ՎՊ) ամրագրված բոլոր միջոցներին եւ պահանջներին համապատասխան՝ հաշվի առնելով Երաշխիքների մասով մոնիթորինգի հաշվետվությամբ ամրագրված ուղղիչ կամ կանխարգելիչ գործողությունները (Առդիր 5, կետ 7),

- երաշխավորել եւ ապահովել, որպեսզի Նայջրմուդկոյուդի ընկերությունը երաշխավորի, որ Ծրագիրը որեւէ բացասական ազդեցություն չգործի փեղաբնակների վրա՝ Բանկի երաշխիքների քաղաքականության փաստաթղթի (Ե-ԶՓ) իմաստով, իսկ նման ազդեցության դեպքում ապահովել, որպեսզի Նայջրմուդկոյուդի ընկերությունը նախապարաստի, ներկայացնի եւ իրականացնի փեղաբնակների հետ կապված ծրագիր՝ փեղաբնակների եւ Բանկի երաշխիքների քաղաքականության փաստաթղթի (Ե-ԶՓ) վերաբերյալ Նայասրանի Նանրապետության բոլոր կիրառելի օրենքներին եւ կանոնակարգերին համապատասխան (Առդիր 5, կետ 9),

- հասանելի դարձնել կամ ապահովել, որպեսզի Նայջրմուդկոյուդի ընկերությունը հասանելի դարձնի մարդկային եւ ֆինանսական ռեսուրսներ՝ Ծրագրի բնապահպանական կառավարման պլանի (ԲԿՊ) եւ Ծրագրի վերաբնակեցման պլանի (ՎՊ) լիարժեք իրականացման համար (Առդիր 5, կետ 10),

- իրականացնել կամ ապահովել, որպեսզի Նայջրմուդկոյոդի ընկերությունն իրականացնի Նամաձայնագրի 5-րդ առդիրի 12-րդ կետի «ա»-«է» ենթակետերում սահմանված գործողությունները (Առդիր 5, կետ 12):

7. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ 2007 թվականի դեկտեմբերի 18-ով թվագրված Սկզբնական վարկային համաձայնագիրը՝ «Նայասրանի Նանրապետության եւ Ասիական զարգացման բանկի միջեւ 2363-ARM (SF) (Ջրամաքակարարման եւ ջրահեռացման սեկտորի ծրագրի)» վարկային համաձայնագիրը Նայասրանի Նանրապետությունը վավերացրել է 2008 թվականի ապրիլի 4-ին՝ Ազգային ժողովի թիվ Ն-071-4 որոշմամբ (ՄԴՈ-738):

Վերոհիշյալ համաձայնագրով Նայասրանի Նանրապետությունը ջրամաքակարարման եւ ջրահեռացման համակարգի բարելավման միջոցով՝ թվով 16 ավաններում եւ 125 գյուղերում բնակվող մարդկանց խմելու ջրով ապահովելու նպատակով, Բանկից ստանում է 23.498.000 ՓՆԻ (փոխառության հատուկ իրավունք) համարժեք վարկ:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ նշված Նամաձայնագրի Ջրամաքակարարման եւ ջրահեռացման սեկտորի ծրագրի իրականացմանն ուղղված վարկային միջոցների օգտագործման ուսումնասիրություն է կատարել ՆՏ վերահսկիչ պալատը եւ 2010 թվականի հունվարի 18-ից մինչեւ սեպտեմբերի 1-ը ժամանակահատվածում իրականացված վերահսկողության արդյունքների վերաբերյալ կազմվել է Ընթացիկ հաշվետվություն:

8. Սահմանադրական դատարանը նաեւ արձանագրում է, որ Նամաձայնագրի 3-րդ առդիրով ներկայացված վարկի միջոցների հարկացման ու մասհանման աղյուսակի հիման վրա կատարվել է վարկային միջոցների բաշխում: Այդ միջոցների նպատակային ու արդյունավետ ծախսման նկատմամբ անհրաժեշտ է իրականացնել պետական վերահսկողություն ինչպես Նամաձայնագրի 3-րդ առդիրի 7-րդ կետով ամրագրված դրույթի համարեքստում, այնպես էլ այդ միջոցների համաչափորեն բաշխման պեսանկյունից:

9. Սահմանադրական դատարանը գտնում է նաեւ, որ նման համաձայնագրերի վավերացման ժամանակ, որոնք ենթադրում են լրացուցիչ ֆինանսավորում, անհրաժեշտ է նախապես հստակ գնահատել արդեն իսկ կատարված աշխատանքների արդյունավետությունը, եւ դրանից ելնելով՝ ճշգրտել վարկային միջոցների հարկացման եւ մասհանման օբյեկտներն ու ծավալները:



Միաժամանակ, սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ հարյուրավոր համայնքներ ընդգրկող նման ծրագրերի իրականացումը հասարակության համար պետք է լինի առավել հրապարակային ու թափանցիկ, այդ թվում՝ ապահովելով մաքսելի փեդեկավություն իրականացվող ծրագրերի վերաբերյալ:

**10.** ՆՏ կառավարությունը 2012 թվականի հունիսի 14-ին հավանություն է տվել Նամաձայնագրին:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Նայաստանի Նանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Նայաստանի Նանրապետության օրենքի 63, 64 եւ 72-րդ հոդվածներով, Նայաստանի Նանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. 2012 թվականի մայիսի 3-ին ստորագրված՝ Նայաստանի Նանրապետության եւ Ասիական զարգացման բանկի միջև «Զրամաբակարարման եւ ջրահեռացման սեկտորի ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Նայաստանի Նանրապետության Սահմանադրությանը:

2. Նայաստանի Նանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՆՈՂ**

**Գ. ՆԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

15 հունիսի 2012 թվականի  
ՍԴՈ- 1032